

## *ՀՀ Արևավիրի մարզպետի ուղերձը վերջին դասի կապակցությամբ*

Միրելի՛ շրջանավարտներ,

Ջերմորեն շնորհավորում եմ ձեր կյանքի ամենանշանակալից իրադարձություններից մեկի՝ դպրոցն ավարտելու կապակցությամբ, որի ավարտը գեղեցիկ ավանդույթ է՝ Վերջին դաս: Բոլորիդ համար այս օրը չափազանց հիշարժան է ու անմոռանալի, և համոզված եմ, որ այս տոնական օրը հարազատ կրթօջախում հնչող Վերջին զանգի դողանջն ուղեկցելու է ձեզ ողջ կյանքում: Մաղթում եմ, որ այս ուրախ օրը հաջողությունների և նոր երջանկության սկիզբ լինի ձեզ համար:

Դուք մեր հայրենիքի և անկախ պետության այն հերթական սերունդն եք, ում վերապահված է լինել երկրի կայացման գործում իրական ձեռքբերումների ու հաջողությունների շարժիչ ուժը: Քանի որ յուրաքանչյուր հաջորդ սերունդ, դաստիարակվելով ազգային արժեքներով ու հայրենասիրական ոգով, առավել նվիրված է ծառայում իր երկրին: Դուք այդ արժեքների հետ մեկտեղ ունեք նվիրական երազանքներ, հոգու և մտքի մեծ հարստություն: Ցանկանում եմ, որ այդ երազանքների իրականացման ճանապարհը դուք անցնեք առաջին հերթին որպես լավ մարդ և արժանապատիվ քաղաքացի:

Մեր հինավուրց հայրենիքի ու նորանկախ պետականության առջև ծառայած մարտահրավերները հաղթահարելու միակ ճանապարհը հզոր, աշխարհում իր կայուն տեղն ունեցող պետություն և բանակ ունենալն է:

Վստահ եմ, որ ձեր համար հայրենիքը խորհրդանշվում է նաև բանակով, որի շարքերը ձեզանից շատերը կհամալրեն՝ պատվով կատարելով զինվորի ու սպայի բարձր առաքելությունը:

Շնորհավորանքի խոսքեր եմ հղում նաև մեր մանկավարժներին և ձեր ծնողներին՝ հույս հայտնելով, որ դուք իրականություն կդարձնեք ձեզ հետ կապված նրանց բոլոր երազանքները:

Միրելի ուսուցիչներ, դուք այսօր դեպի հասարակության ակտիվ կյանք եք ճանապարհում նոր սերունդ, որին փոխանցել եք Ձեր ողջ գիտելիքներն ու իմացությունները: Շնորհակալություն մեր զավակների կրթության գործին Ձեր անմնացորդ նվիրումի համար:

Միրելի՛ շրջանավարտներ,

Թեև վերջին դասը խորհրդանշում է հրաժեշտ, այն նաև խորհրդանիշ է նոր սկզբի, նոր հեռանկարների ու հորիզոնների և այդ ամենի նկատմամբ պատասխանատվության բարձր զգացումի: Դուք մտնում եք նոր կյանք, որտեղ դպրոցից ստացած դաստիարակությունն ու կրթությունն անհրաժեշտ են լավ մարդ, հայրենիքի համար պիտանի քաղաքացի լինելու համար:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ ձեզ՝ մաղթելով երջանկություն և հաջողություններ մեծ կյանքի ճանապարհին: Թող ճակատագիրը բարի, լուսավոր ճանապարհ բացի բոլորիդ առջև: Բարի ե՛րթ ձեզ, երջանկություն և նորանոր բարձունքների նվաճում:

*Մեծագույն սիրով՝  
ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյան*